

Վեցհարիւր քսանէւշորս տուն հայ կայ թաղիս մէջ:

Թաղեցոյն մեծ մասը արհեստաւոր է, որուն սովորութիւնն է ամեն կիրակի առաւօտ բաղնիք երթալ եւ բաղանիքէն ետքը եկեղեցի եւ եկեղեցիէն վերջը գինետուն: Աղօթքն, ինչպէս կտեսնուի՝ իւր առջեւն ունի մաքրութիւն եւ ետեւն օղի: Ըստ մեզ՝ թաղեցին աւելի տրամաբանօրէն վարուած կ'ըլլար՝ եթէ նախ գինետուն երթար, ետքը բաղանիք եւ ամենէն վերջը եկեղեցի մտնէր: Թէպէտեւ թաղիս մէջ տասը գինետուն կայ՝ բայց թաղեցին հազար հինգհարիւր գինետուն ապրեցնելու կարող է, վասնզի գինետուն պահելն վարժարան պահելու պէս դժուարութիւններ չունի, վասնզի ամեն մարդ ամեն երեկոյ ազգասիրաբար առ նուազն քառասուն բարա կու տայ գինետան:

Պալատցին որչափ քիչ դպրոցասէր՝ այնչափ շատ հիւրասէր է. իւր հիւրասիրութենէ ծնունդ առած է հետեւեալ առածը.

«Պաղտատ գնացողը վերադարձած է, իսկ Պալատ գնացողը վերադարձած չէ»:

Եթէ թաղիս մէջ գիշեր մը հիւր գտնուիս՝ զքեզ կատարելապէս կ'զինովցնեն:

Մեր ազգայիններն հոս գրեթէ մեծ մասամբ դիւրահաւան են: Գաղտնեաց գտող, գուշակութիւններ ընող կիներուն մեծ պատիւ եւ հաւատք կ'ընծայեն. ամենէն երեւելի կախարդուհիներն այս թաղին մէջ կ'ընակին: Առանձնասէր են. նախապատիւ կ'համարին ամիսներով առանձին նստիլ՝ քան թէ ժամ մը մէկ երկու բարեկամներու հետ խօսակցիլ: Չը մոռանանք ըսել, թէ շատակեր են, եւ եթէ այս դարուս մէջ մէկը պալատցի սպասաւոր մը ունենայ՝ հացավաճառին հետ ամեն օր կռիւ ընելու կստիպուի, կարծելով թէ հացավաճառը մէկ հացի տեղ չորս հաց անցուցած է հաշւոյն մէջ:

Սովորականէն աւելի անգործ շատախօսներ կան, որք կոյր են մտօք եւ դեղ ալ առնելու տրամադիր չեն՝ իրենց միտքը բանալու համար:

Թաղիս մէջ սովորութիւն մը կայ, որով մէկն իւր բարեկամներուն բարեւ տալը կդադրեցունէ, եթէ երկուքերէք հարիւր ոսկի մէկէն վաստկի:

Շատ ուշ կամուսնանան հոս. յիսունէն առաջ կարգուիլն անխոհեմութեան նշան կ'համարուի, եւ երբ մէկն յիսունէն առաջ կարգուի ամենուն երեսէն կ'իյնայ եւ իբր շոյլ ոք կնկատուի թաղեցիէն:

Երիտասարդութիւն մը կայ սակայն, որ ամեն ճիգ կ'թափէ թաղը լուսաւորելու համար – կազով չհասկնաք: Այս երիտասարդութիւնն աւելի